


# ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմայրի» օրաթերթի հավելված

1990 թ. դեկտեմբեր, № 4: Գինը՝ 50 կոպ.:



Այսպես մտահիպացատ էր քաղցվում դեկտեմբերյան առավոտը Էնիճի հիասպարա- կոս, երկրաշարժից երկու շաբաթ անց: Լուսանկարը՝ Վ. Կոտովի

## Վշտի և արիության օրեր

### ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20

Երկրաշարժից տուժած շրջաններում աղետի պատճառով ընդմիջումից հետո լույս տեսան տեղական լրագրերի առաջին համարները: Այդ օրը ծնողներն ու հարազատները գտել էին իրենցից բաժանված ավելի քան հինգ հարյուր երեխաների: Ժնուս Հայաստանի համար նախատեսված 150 տոննա բևո վերցրեց «Ռուսլան» օդային հսկան: Նա Երևան հասցրեց տարացվող վրաններ, շարժական ոգտիոկայաններ, էլեկտրա- սարքավորումներ:

Երևան ժամանեց գթասրտության միասնության մայրա պետ, միջազգային Նորելյան մրցանակի դափնեկիր Մայր Թե բեզան: Նա պատրաստակամություն հայտնեց Խորհրդային Միություն ուղարկել միանձնուհի քույրերի՝ տուժածներին օգ- նություն ցույց տալու համար:

### ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24

ԽՍՀՄ Միմիստրների խորհրդի արտահերթ նիստում քըն- մարկվել են երկրաշարժի հետևանքների վերացման համար Հա յաստանին բազմակողմանի օգնություն ցույց տալու անհետա ձգելի միջոցառումները: Երկու տարվա ընթացքում պետք է վերականգնվեն և նոր կառուցվեն 4 միլիոն խորանարդ մետր տարածության բնակելի տննի սոցիալ-կուլտուրական, կենցա դային և առևտրական կոմպլեքսով:


Գնական աղետից տուժածներին օգնություն ցույց տալու հետ կապված քուր հարցերում ԽՍՀՄ Միմիստրների խոր- հուրդը կոմկրետ որոշումներ ընդունեց: Դրանցում նախատես ված է, որ երկրաշարժի հետևանքների վերացման ուղղու- յամբ միջոցառումների համար ծախսերի ընդհանուր ծավալը նախնական գնահատմամբ կկազմի 8-8,5 միլիարդ ուրլի:

# 1987 ՎԵԿՏԵՄԲԵՐԻ 7



Աղետի առաջին օրին անգնահատելի օգնության ցույց տվեցին աշխարհի շատ երկրների փրկարարական ջոկատները:





Խաղաղություն ամեն-  
ցուն:

Լուսանկար՝

Հմ. Կարապետյանի

\*\*\*

Նայի՛ր որքան կուգես,  
չես հանաչի փողոցն այս՝  
աների շախչախված հա-  
կատներով:

Լուսանկար՝

Ս. Մակարյանի

\*\*\*

Անօրհաներ...

Լուսանկար՝ Վ. Կատովի



# Կ Ա Ն Խ Ա Գ Ո Ւ Ծ Ա Կ Ո Ւ Ս

(Սկիզբը՝ «Հիշողություն»  
հավելվածի № 3-ում)

Իսկ է՝ Նեանթյանովիչի տեսությունը հիմնված է արտակրկրացիներ՝ Արևի, մոլորակների, Լուսնի նրանց ուղեծրային հարթությունների ու երկրի պտույտների հարթությունների հատման գծերի, մոլորակների (Սպիտակի երկրաշարժի վրա՝ Յուպիտեր մոլորակի հետ կապված ուժերի) ուղեծրերի ստանցքային կոնքերի 18 տարի տևող փուլերի ազդեցությունների հետ: Հաշվարկելով այդ բոլոր փուլերը, Նեանթյանովիչը համընկնման կետում երկրաշարժ է կանխատեսում: Երկրի մթնոլորտն ու իոնոլորտը դիտում է որպես տատա

նողական կոնստր, որտեղ ինդուկցիայի դերը պատկանում է իոնոլորտին, իսկ երկիրը փաստորեն ծավալն է: Տիեզերքն ունի տատանումների սեփական հաճախականությունը, երկիրը՝ իրենը: Երբ դրանք համապատասխանում են՝ երկրաշարժ է տեղի ունենում: Իրար հետ խիստ կապված են ուղեծրով լուսնային անկյան շարժումն ու նրա 18 տարի 7 ամիս տևող փուլը: 1988 թվականից Տոմսկում տեղի ունեցած գիտաժողովում իր գեկուցման մեջ Նեանթյանովիչը կանխատեսել էր Հայաստանում ապաստիղ երկրաշարժը: Այս կերպ ուկրաինոսից կանխատեսել էր 1984 թվականի մարտի 19-ին Գազլի երկրաշարժը, հետո հա՛ (Շարունակությունը՝ 8-րդ էջում)

## Զ Ր ՈՒ Ե Գ

Ո Ր Ղ ՈՒ Ա

Հ Ե Մ . . .



Ուզում եմ գրուցել մեկու՛սար որդու՝ Հենրիկ (Սամվել) Վոլոդյայի Մուղղուսյանի, երբեմնի հույսիս աղբյուրի հետ, այնպես, որ բիս բոլոր ինձ նըման որդեկորույս մայրերի յթեմապատիկ խոցված սրտերից:

Իրավ է, մեզ շատերն են ողբապաններ համարում, մեզալ բուն են՝ անընդհատ՝ գերեզմանոց գնալու, ողբարու համար: Բայց մի՞թե անոթ է որդու կամ հարազատի համար ողբալը:

Թող մեռեն ինձ հազար անգամ այն մայրերը, որոնք որդի են կորցրել ու իմ այս տղան վերստին պիտի նորացնեն իրենց հնացող ու ամեն օր նորացող վիշտը:

...Միքելի որդիս, կյանքի մորթկով գարկված թռչունս, որ թռար ձեռքիցս հավթի նման ու բույնդ կորցրիր, ձագերդ թողիր աղիողորմ ծվծվոցով: Դու գիտե՛ս, արդյոք, թե ինչպես է ծովացել կարոտս...

Ա՛յ, հրաշք լինել մի պահ, հագտնվեիր երեխա դարձած, մոր ոտքի ելած: Հրաշք լինել, լինել հրաշք, դու նորից դըպրոցից տուն գալիս՝ պացուսակըդ ստած ու դեռ դունից հայտնվիր. «Մայրիկ, «Տ» եմ առաջել, դե հինգ անգամ համրուիր»:

Եթե այդքան հրաշքներ եմ երագում, լինել գեթ մի պահ, որ հագտնվեիր հորից գրկված քո քաղկենրի՛ն՝ Վոլոդյայիս ու Մամիկիս, գրկեիր, մի անգամ վճիտ աշունկները համրուրեիր ու գնալիս թեկուզ 10.20 տարով, միայն թե հույս ունենային...

Ասա, հիմա ի՞նչ անի երիտասարդ, թեակոտոր կինը, իմ հարսիկը, որ որբացած ձագերի թևերի տակ առած և՛ ողբուն է քեզ համար, և՛ մտահոգվում՝ որբերիդ քո նրազած օրերից հասցնելու:

Բայես, երևի մի քան զգացել էիր, որ, երբ երիտասարդի մահ էիր տեսնում, ասում էիր՝ Դարույր Սևակի իրսքերը. «Թե՛ թաղել է պետք, որդին թաղի իր ձեռ մորը, ոչ թե մայրը՝ ջախել որդուն»: Ա՛յ, ինչ լավ է ասել մեծ երախտասպորը:

Մեկ-մեկ մտաբերում եմ հարսանիքիդ այն պահը, երբ պարելով ուներիդ էի գցում անուշաբույր լախաշը, ու չգիտեմ ինչու, երևի անսաի ուրախությունից՝ հուզվեցի ու աչքերս արցունքոտվեցին: Այդ չվրիպեց քո սրատես հայացքից, ինձ փաթաթվեցիր ու ասացիր. «Մա, աստված չանի քո աչքերն արցունքոտվեն»: Եվ դա եղավ իմ վերջին ուրախությունը:

Ամենից հաճախ հիշում եմ այդ անսալոր. օրվա վերջին ժամը, երբ տանից դուրս գալիս ասացիր. «Մա, կատարումս պատրաստիր, ես գամ, հետո կարևոր տեղ ունեմ գնալու»: Ես չեկար, դրա փոխարեն մահվանդ թող հասավ ինձ: Բա եղա՞վ: Չէ որ հորդ մահվան օրը, երդվեցիր նրա դազադի մոտ, թե մորդ այնպես կպահես, որ ապրած ոչ մի օրը չսպիտաս: Մ՛ր է, հապա, քո երգումը ո՛ր մնաց:

Ի՞նչ ասեմ: Երբ մտնում եմ գերեզմանոց, երբ աչ ու ձախից վշտահար մայրերի ողբն եմ լսում, վշտաբեկ հայրերի արձանացած կերպարանքը տեսնում, միշտս կրկնապատկվում է: Ո՛ր ես ամեն օր մտածում եմ իմ և իմ քախտակիցների մասին, որ մեր վիշտը սահման չունի:

Քաղցր քաղես, քերանս բռնում է ասելու, թող ձեր հողով աստված երկար կյանք տա ողջ մնացած ջահելներին, երկխաներին, որոնք պիտի շենացանք մեր ավերված քաղաքը և ամեն առիթով հիշեն ամենդ զոհերիդ, անժամանակ գնացածներիդ:

Մայրդ՝  
ՄԱՆԻԿ ՄՈՒՂՎՈՒՍՅԱՆ









ՍՎԵՏԼԱՆԱ  
ԱՐՏՈՒՇԻ ԿԱՅՅԱՆ

Ծնվել է 1970 թվականին: 1977-78 ուսումնական տարում ընդունվել է Սպանդարյանի անվան № 4 միջնակարգ դպրոցը և ավարտել 1986-87 ուստարում: Ուսման բոլոր տարիներին ունեցել է գերազանց առաջադիմություն և օրինակելի վարք:

Սվետլանա Կայսանը փառացի ինչպես դպրոցում, այնպես էլ պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղում: Նրա բոլոր երազները, որ ծաղկել էին բուսական կամարների տակ, մի վայրկյանով հանգեցին նույն շենքում, նրա փվղոջ սրունքի հետ միասին, իրենց տակ թաղելով 20-րդ դարնանը անհուն բերկարներով սպասող ուսանողուհու կյանքն ու երազները:

ՖՈՒՐԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՌԱՅԱ ՄԵՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նոր էր բոլորել կյանքի 19-րդ գարունը: Երազում էր նշել 20-ը, բայց չհասցրեց: Եվ ինչքան էր նա սիրում կյանքը, քույրերին, մորը, ընդհանրապես մարդանց, և, իհարկե, երաժշտությունը: Ավարտել էր № 9 միջն. դպրոցը և № 1 երաժշտական դպրոցի ջութակի բաժինը, Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը: Արդեն աշխատում էր: Որպես ջութակ սահման չկար: Երազում էր իր ստաջին և յուրյի մասին: Երազում էր...

Ռայայից հիշատակ մնացին գրեզուն ծիծաղն ու իր ջութակի մեղմ հնչյունները:

ՄՈՐ ՊԱՏՄԱՆԻՑ



ԱԼԵՔՍԱՆ  
ԼԵՈՒՅԻՄ ՎԱՐՈՍՅԱՆ

1970-ին է ծնվել, սովորել № 35 դպրոցում: 8-րդ դասարանից կրթությունը շարունակում է պոլիտեխնիկումի սննդի բաժնում:

Մայրական սիրուն ինչպես կարող է հովանալ, ինչպես կարելի է հանգցնել նրա հոգում բույն դրամ վտի անշեջ կրակը: Ինչով միտքներն ինձ, երբ իմ անգին որդին այդ օրը առաջին անգամ իր մասնագիտական պրակտիկան պետք է անցկացնել շուսպ բուժօգնության կայանի մոտ գտնվող դպրոցական սննդի կոմբինատում և... Այնու չվերադարձավ:

Մահվանից մեկ շաբաթ առաջ էր նկարվել ուսանողական ավարտական կուրսի աշունի համար:

ԱՐԱ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՂԱՎՈՅԱՆ



Արա Սասունիկի Ղավոյանը ծնվել է 1965 թվականին, Լեհիստանում: 1982-ին ավարտել է մաթեմատիկական թեքումով դպրոցը և ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնոլոգիական ֆակուլտետի կաշվե իրերի տեխնոլոգիայի բաժինը: Բանակային ծառայությունից հետո շարունակել է ուսումը:

1990 թվականին Արան պետք է ավարտեր ինստիտուտը...

Նրան դուրս բերեցին ինստիտուտի փլատակներից, հասցրեցին օդանավակայան, բայց փրկություն, բարի սիրտը չհիմնացավ: Այժմ նա թաղված է Կրաշեն գյուղի գերեզմանատանը: Իր նման հպարտ, մի հոյակապ իտալացի գարդարում է գերեզմանը:

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ



ԱՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ

Իմ դուստր Աննա Սուրենի Ավագյանը 1968 թվականի դեկտեմբերի 14-ին է ծնվել: Մինչև 7-րդ դասարանը սովորել է Խ. Այրովյանի անվան, ապա՝ Գորկու անվան միջնակարգ դպրոցում: Գորկու անվան դպրոցում կոմերսիոմիության քարտուղար էր ընտրվել: Առանց տարի կորցնելու ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը:

Այնքան գունդ երազներ ուներ իմ Աննան, որքան երջանիկ էր և ինձ էլ լցնում էր իր ափեռի երջանկությամբ: Այդ ուսման երեք տարիները երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԱՐՄԻԿ ԵՎ ԱՐԴԱ ՄԵՍՐՈՊՅԱՆՆԵՐ



Դեռ չէր ծնվել Վարսիկը, երբ հայրը երազ տեսավ: Մի ակզարոյ ծերունի՝ պատկանելի դեմքով, երկու գեղեցիկ խնձոր մեկնեց իրեն, իսկ ինքը վերցրեց ու չկերավ, պահեց ձեռքի մեջ, նայեց, նայեց ու որոշեց, պահել ձյան տակ: Սաղը ձյունը ձեռքերով հետ տարավ ու խնձորները պահ տվեց հողին:

Գերեզման առաջվեց, իսկ ծերունին չբացավ: Վեր թռավ քնից: Երազ էր, սարսափելի երազ: Հազար ու մի վատ բան անցավ մտքով ու աշխատեց հետո վաճել իրենից չար մտքերը: Մի քանի օր անց ծնվեց առաջնեկը՝ Վարսիկը: Եիշտ է, տղա էր ուզում, բայց ինչքան սիրելի էր աղջիկը: Հետո ծնվեց Արդան: Մեծանում էին աղջիկները և օրեցօր մեծանում էր նրանց նրկատամբ հոր սերը: Էլ տղա չէր ուզում: Վարսիկը ուսման գերազանցիկ էր, միայն «5»-եր էր ստանում, Արդան՝ ուսման առաջավոր, բայց չէր Քախանձում Վարսիկին, այլ ձգտում էր հասնել նրան:

13-ամյա Վարսիկը կարող էր փրկվել, դուրս թռչել դպրոցի պատմասանից, բայց չէր արել: ցանկացել էր փրկել 5-րդ դասարանում սովորող քրոջը, սակայն...



ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ

ԼԻԱՆԱ ՌՈՒԲԵՐՏԻ ԿԱՂԶՎԱՆՅԱՆ

Լիանան էլ շատերի նման դպրոց ու մանկապարտեզ է հաճախել: Մանուկ հասակից շատ էր սիրում երաժշտություն և ուներ երաժշտական ընդունակություններ: Ուսմանը զուգահեռ, երաժշտական կրթություն էլ ձեռք բերեց: Հակում ուներ նաև տեխնիկական գիտելիքների, ավարտելով միջնակարգը, ընդունվեց Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը:

Աշխույժ, երազկուտ և ամոթխած էր Լիանան: Անգամ առաջին ձյունը էր նրան հիացնում: Երբորդ կուրսում էր, երբ գոհ դարձավ դեկտեմբերյան աղետին: ԹԱՄԱՐԱ ԿԱՂԶՎԱՆՅԱՆ



ԳՈՀԱՐԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տոնմիկ գյումրեցու ընտանիքում, 1973-ի հունիսի 22-ին է ծնվել: 1980 թվականին ընդունվել է Կիրովի անվան դպրոց: Միաժամանակ ուսանել է Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում:

25-ամյա աղջկա օրը վատառողջ էր, բայց դեպքով գնաց: Սովորում էր 9-րդ դասարանում: Չռիկվեց իր սիրելի ուսուցչուհու հետ:

Աղետից 2 օր առաջ նախապես էր գրել հորաքրոջը, որ Մոսկվայի հիվանդանոցներից մեկում բուժվում էր, մեջբերելով իր գրած բանաստեղծությունը, կարծես կանխազգալով իր ողբերգական վերջաբանը:

Երբ առավոտ շուտ արթնանաս, Հիշի՛ր ինձ...



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԳԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Լուսանկարից մեզ է նայում գեղեցիկ ու արտասխալիչ աչքերով այս պատանին: Բնության անավոր աղետը կորեց սևաչա այս պատանու կյանքի թեղ ծաղիկ հասարկում: Հովիկը ծնվել է 1979 թվականին: Սովորում էր Ա. Պետրոսյանի անվան դպրոցում: Չարաճի էր և օժտված էր ֆիզիկական լավ տվյալներով, լավ էր սովորում: Մայրը փոքրիկ Հովիկի մեջ տեսնում էր անմնայվալն ու բարին: Բայց ավաղ, տնքում է մայրական սիրտը որդուն կորցնելու ցավից ու միտքաբեկում միայն նորածին նրկալով: Չռիկվեց որդին, հավերժ փակվեցին նրա սև, կանքով սուղեում աչքերը:



ԱՐԹՈՒՐ ՏԱՐԻԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Այս լուսանկարում Արթուրը մեր հետ է նկարվել: Ծնողներն հիմա մնացել են անզավակ, դատարկված հոգով: Ըավատագիրն անշափ դաժան վարվեց այս ընտանիքի հետ, տանելով մե՛ն միակ սիրաբան զավակին:

Արթուրը Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցում էր սովորում, 8-րդ դասարանում: Ուշիմ ու ընդունակ թե ուսման մեջ և թե հատարակական աշխատանքում: Պատանի գաղափար էր...





ԳՆՐԳԱՍՏԱՆԻ ԱՆՄԵՂ  
ՋՈՂՆԵՐԻ ՀՈՐԵԱՐՄԱՆ-ԽԱՉ-  
ՔԱՐԸ ԱՐԹԻՎԻ ՇՐՋԱՆԻ  
ՀԱՅԳԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ ԳՆՐԵՉ-  
ՄԱՆԱՏԱՆԸ:



ՔԱՆԳԱԿԱԳՈՐԾ ՌԱՇԽԻ  
ԱՌԱՔԵՆՅԱՆ:

# ՏՐԵՆԵՐ, ՄԳՆՆԵՐ ԵՎ ԳՎՈՒԽ ԽՈՒՆԱՐՉԵՆԵՐ



«Հիշողություն» շարաստեղծի համաձայն հազարավոր անմեղ զոհերի լուսանկարների մեջ նաև ծնողներին, նրանց թոռնիկներին, հարս ու փեսայի լուսանկարներն են: Երկար նայում եմ դեմքերին ու դարձյալ հրեշավոր առաջին օրվա սահմունկնուցիչ տեսարանները ցցվում են աչքիս առաջ... մայրերին ընկած անթաղ դիակներ, կրթօջախների բակերում կողք-կողքի շարված անմեղ, սուրբ երեխաներ, մայրերի ողբ, հայրերի զայված հառաչանք... կոկորդա սեղմվում է, լացի կարոտ եմ զգում, բարձրաձայն լաց լինելու ցանկություն... Ուզում եմ մի բան գրել, չի ստացվում, ձեռքս թուլանում է... թող այս պատմությունը մնա կիսատ, թող էլի ամիսներ ու տարիներ անցնեն: Գուցե կարողանամ հետվիզ նայողի վշտով, հետվիզ նայողի կամքով պատմել, հետվիզ նայողի զգացողությամբ գրել: Իսկ հիմա ինչպես բոլոր անմեղ զոհերի, այնպես էլ իմ ծնողների ու արյունակիցների, համառոտ ու հստակ կցկտոր տեղեկությունները հանձնեմ թղթին՝ որպես հիշողություն և հարգանքի տուրք, որպես հիշատակի խոսք:



ԼՈՒԻՋԱ ԱՐՏՈՒԾԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ (Դեռուսյան): Ծնվել է 1961-ի հոկտեմբերի 2-ին: Հասակինգ տարի անց, նույն օրը ծնվեց դուստրը՝ Եպրաքսիան: Մայրական երկու տարվա քնկրանք ապրեց մեծ գերդաստանի, հայրական օթախի ու աշխատանքային կոլեկտիվների կողմից այնքան սիրված ու հարգված, այնքան բարի ու մարդամոտ Լուիզան: Նրա ու փոքրիկ Եպրաքսիայի կորստի ցավը սրտի կսկիծով ու հոգնկամ ծանր ապրումներով են տանում ծնողներն ու ամուսինը: Չոհների հիշատակը հավերժացնող այս հուշարձանը թող մխիթարանք ու սփոփանք լինի նրանց համար:

ՄԻՐԱ ՊՈՂՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ծնված 1952 թվականին: Ծի նարար բանվոր էր, բարի, կամջող, աշխույժ երիտասարդ: Այդ օրը կինը աշխատանքի էր կարի ֆարքիկալում, երկու դուստրերին ողորակեց դպրոց և որոշեց գնալ կնոջ ծնողներին տեսության, սակայն դա վերջին տեսությունը դարձավ, դաժան ճակատագրի քերտով դարձավ նույն ընտանիքի հիեզերորդ զոհը:

ԱՐՏԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ ծնված 1974 թ. սովորում էր № 16 դպրոցի 8-րդ դասարանում: (Համառոտ տեղեկություններ տպագրվել են «Հիշողություն» հավելվածի 2-րդ համարի 3-րդ էջում):

ԱՐՄԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ծնվել է 1974 թ. Ախուրյանի շրջկենտրոնում: Սովորում էր շրջկենտրոնի դպրոցի 8-րդ դասարանում: Նրան սիրում էին ուսուցիչներն ու դասընկերները, զնահատում էին մարզական ընդունակությունները, իսկ ծնողները մեծ հույսեր էին փայտարում: Ծակատագիրը Արմենի նկատմամբ նույնպես դաժան գտնվեց, դասարանից միակն էր, որ անմեղ զոհ դարձավ...

ԿԱՐՄԵՆ ԳՐԻՇԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ ծնված 1982 թ: Այդ չարաբաստիկ օրը նմիր ու որոյի այցելության գնացին 6-րդ հարկում ապրող հարազատներին: Անեղ երկրաշարժը տակն ու վրա արեց բարձրամակարդ շենքը, իր փառասկների տակ անմեղ խաչուրավոր անմեղ մարդկանց: Հինգ զիշեր ու զօր Գրիշան տառապեց ծածկատակի տակ, սիմացավ ու պայքարեց կյանքի համար: Ի վերջո՝ փրկության լույսեր ճառագեցին, գտան նրան փրկարար շենքը... ապարիկվեց, շարունակեց կյանքը, սակայն փոքրիկ Կարմենը իր մաքրական պայ ու տատի հետ անմեղ զոհ դարձավ...

Խաղաղ անցեք գերդաստանի անմեղ զոհեր, ողջերս միշտ կհիշենք, կզգանք, գրույս կխոնարհենք ձեր սուրբ շիրիմներին...

ԳՈՐԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ (գերդաստանի նաճապետ) ծնված 1911 թ. Արթիկի շրջանի Հայկասար գյուղում: Դար սից զառչած իր ծնողների միակ ժառանգը քաղմանքում ընտանիքի հայր դարձավ, իր կողակից՝ հեռուստի մայր ԵՊՐԱՆՍԻ ԱՐՇԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հետ իր կյանքի վերջին տարիներին կամեցավ ապրել ամենափոքր որդու՝ Անդրանիկի մոտ: Ամուսնացրեց նրան, 43-րդ թունիկն ունեցավ Եպրաքսի Անդրանիկի Գեորգյանը: Գերդաստանի մեծերից ամեն մեկը իր կարողության չափով մասնակցեց հայրենի շրջանի ու Գյումրի քաղաքի զարգացմանը: Իմաստուն, բարի, հող ու քարի վրա քրտինք թափած, քարիք առարած Գեորգյան տոնի մեծերը սկիզբ ու ճյուղ տվեցին տասնվեց նոր ընտանիքների, որոնք վերածաղկեցին Գյումրի քաղաքում ու Շիրակի դաշտի Ախուրյան և Արթիկ ընկալավորներում: Մակայն նրանց հոգաբարձի ծերությունը կարճ տևեց, աղետի զոհ դարձան իրենց թոռների, հարս ու փեսայի հետ՝ նույն հարկի տակ: Այդ ընտանիքի փրկված ամենափոքր որդին՝ Անդրանիկը այդ պահին փրկում էր աղետալներին, չիմանալով իր ընտանիքի գլխին թափված արձակաբքը:  
Գեորգյանների գերդաստանից տղետի զոհ դարձան՝



ՀԱՅՐ ՈՒ ԱՂՋՐԿ

(Ջոնիվեցին աշխատանքում) ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՈՂՈՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1938 թվականի փետրվարի 12-ին, Ղուկասյանի շրջանի Սեպասար գյուղում: Երկու տարեկանում կորցրել է հորը, որը մեծացել էր, առհասարակ վեց երեխաների խնամքը մնացել է միայնակ մոր ուսերին:

Ստանալով յոթնամյա կրթություն, 16-ամյա պատանին սկսել է աշխատել շինարարությունում, տիրապետելով ձեռագործի մասնագիտությանը: Ծառայել է խորհրդային բանակում: 1963-ին ամուսնացել

է, ունեցել 4 երեխաներ:

Հ. Ղազարյանը 1961 թվականից աշխատում էր Լենինականի հիլոդի հաստոցների գործարանում որպես ներկարար: Եվ այդ գործարանի 10-րդ արտադրամասում, աշխատանքի ժամին, դաժան ստեղծ կտրեց 50-ամյա Համբարձում Ղազարյանի կյանքի թելը:

Նույն ճակատագրին արժանացավ նաև նրա 22-ամյա դուստր ՌԻՏԱ ՂԱԶԱՐՅԱՆԸ, որն աշխատում էր գույպեղենի արտադրական միավորման կուտոն արտադրամասում որպես որակավորող:

Կնոջ՝ Նազիկ Ավետիսյանի պատմածից



ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ՎԱՀՐԱՄ ԷԴՄՈՆԻ ԶԻՏԱԶՅԱՆ

1964 թվականի նոյեմբերի 27-ին էր ծնվել: Լենինական քաղաքում: 2 էր հասցրել ամուսնանալ: Նա 35 դպրոցում ստացել էր ութամյա կրթություն: Ապա ուսուցիչ շարունակեց Նա 7 կրթֆոնիտուսումնաբանում, որն ավարտելուց հետո մեկնեց բանակային ծառայության: 1986 թվականից աշխատում էր «Հայէլեկտրակոնդենսատոր» արտադրական միավորման Նա 3 արտադրամասում:

Բարի էր ու ընկերասեր: Մարդկանց հանդեպ լցված էր լուսավոր հավատով, ապագայի պայծառ լավատեսությամբ: Բոլորի նկատմամբ հոգատար էր ու գիշոր, սիրում էր սրամտել ու կատակել, ուրախություն պատճառելով շրջապատին:

Ջոնիվեց Կոչտոյան փողոցի 3-րդ շենքի 1-ին մուտքի առաջ, այն շենքի, որի ամեն մի բար հարազատ էր նրան, որի մտքից տարիներ շարունակ բաղել էր, անցկացրել իր լավագույն տարիները:



ԷԴՄՈՆ ՎԱՀՐԱՄԻ ԶԻՏԱԶՅԱՆ



բառերով: Ծառ էր կապված զավակների հետ: 1984 թվականի հունիսի 4-ին կրտսեր որդու՝ Վահրամի խորհրդային բանակ մեկնելուց երեք օր անց ստանում է սրտի ինֆարկտ: Որդու վերադարձը կարծես նոր լիցք հաղորդեց նրան, առողջությունը վերականգնվում էր: Բայց այդ երջանկությունը երկար չտևեց, վրա հասավ մահաբեր 1988-ի դեկտեմբերի 7-ը, որը սև քիծ դրեց հայոց պատմության վրա՝ նոր սև էջ ավելացնելով առանց այն էլ արյուն-արցունքով գրված նրա էջերին:



ԿԱՐԻՆԵ (1968 թ. ծնված) և ԱՐՄԵՆ (8-րդ դարանի աշակերտ էր): Քույր ու եղբայր, կյանքից հեռացաք, երբ դեռ չէիք հասցրել ճաշակել նրա քաղցրությունը, երբ չէիք հասցրել սպրեկ երիտասարդական ուրախ ու սննդոգ կյանքի հրճվածքն ու բերկրվածքը, առաջին սիրտ ապրումներն ու սպասումները...

«Գիշեր է: Անձրևոտ գիշեր ու քաղաքի լսատերները լալիս են մարդկանց անհաջողությունների համար, լալիս են մեծակությունից... Լալիս են, որովհետև վաղը անձրևի պատճառով թոփշբային եղանակ չի լինելու, ինչ-որ մեկը չի համոզիսի, չի սիրի, չի սպասի...»: այս տողերը գտան ընթուշ ու բարի Կարինեի գրպանից: Պոլիտեխնիկական ինստիտուտի երրորդ կուրսում էիր, անբաժան երաժշտությունից, գրքերից: Իսկ հիմա, անձրև, թե արև, գիշեր, թե ցերեկ, ողջ քաղաքն է լալիս երկրաշարժի անմեղ զոհերից համար, լալիս նաև ձեր՝ Կարինե և Արմեն Իգիթյանների ողբերգական մահվան համար: 2 հասցրիք սիրել, համբուրել, սպասել, հանդիպել: Չսպասեցիք ձեր հորը, որն այդ օրերին հեռավոր Ուզբեկստանում էր: Հեռացաք կարտոն ու արցունքը ձեր սրտերում: Ու գիշեր է մեր հոգում, անարևոտ գիշեր:



ՎՈՒՌԻՑԱ, ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ

Հացիկի գերեզմանատանը երկու վարդազուն շիրմաքարեր են կանգնած. հորը՝ Վոլոդյա Գրիգորյանինը, որպես դատը կսկիծ ու հեկեկանք ու որդուն՝ Գորգիինը, որպես ներմակ ամսերից թափվող քարացած արցունքի կաթիլ...

Հայր ու որդի: Երկուսն էլ սիրված, երկուսն էլ հարգված հարազատների ու ընկերների շրջանում: «Վարդազուն Վոլոդյա», այսպես մտերմիկ ու չեքոքոն էին դիմում նրան երիտասարդները, որոնց համար և ընկեր էր և խորհրդատու: Օրհնարար էր, շազմափորձ, հմուտ: Նրա ձեռքերով կատարված ոչ մի տուն այդ աղետից անգամ ճաքեր չտվեց: Նոր էր բոլորել 60-ը, երբ... Հայր ու որդի միասին էին փլատակների տակ: Որդին վաղուց հանգչել էր հոր գրկում բայց բարի, ուժեղ կամքի տեր մարդը «դրսում» կանգնածների հարցերին պատասխանում էր նաև որդու փոխարեն: Պատասխանում էր, որ «դրսից» շտապեն օգնել, գոնե կողքի ջանկները փրկվեն, պատասխանում էր, որ հարս, զատները թեկուզ մի բանի բույն ու լսեն 28-ամյա որդու մահվան բողբ... Որդու, որ նոր էր հայրիկ դարձել, ընտանիք կազմել: Հարազատների խնայեց, բայց ինքը չի մտածել արտամորթը կակիծին: Փլատակների տակից դուրս գալուց հետո կնքեց իր մահկանացուն... Ու հանգչում են հիմա հայր ու որդի՝ կողք-կողքի, իրարից անբաժան...



նրի միակ որդին՝ 19-ամյա Միշա Գործակալյանը, որը չհասցրեց ճաշակել հաղթանակի բերկրվածքը: Նրա սև թուղթը ցնցեց մորը՝ Մարիա մին: Երբ նա ուշքի եկավ, երկու դուստրերն ու հարևանները նրան համոզեցին, նույնիսկ հավատացրին, որ որդին ոչ թե զոհվել է, այլ անհայտ կորել: Ու ապրեց մայրը՝ որդուն տեսնելու հույսը սրտում:

Անցան տարիներ: Մարիամ Կարապետի Գործակալյանը (ծնված 1904 թվականի օգոստոսի 13-ին), որը Գյուլչյանների նշանավոր տոհմից էր, սովորել է օրիորդաց գիմնազիայում, ամուսնացրեց դուստրերին և երջանիկ էր, որ մեծացնում էր թոռներին, անգամ թոռների երեխաներին: Ավագ դուստրը՝ Սեդա Հայկի

Զ Ո Շ Վ Ե Ն Ի Մ Ա Յ Բ Ը . . .

Գործակալյանը (ծնված 1925 թվականի դեկտեմբերի 22-ին), աշխատում էր գույպեղենի արտադրական միավորումում, երեք երեխաների մայր էր, ուներ նաև թոռներ: Մեծ հույսեր ու երազներ ուներ կապված նրանց հետ: Սակայն մի վիշտ ուներ, որ թաքուն էր պահում մորից. Գերմանիայի Ռաիսբերգ քաղաքում գտնվել էր երրորդ գերեզմանը և ինքը կրտսեր քրոջ՝ Ասյայի հետ մեկնել էր Գերմանիա, իր հետ տանելով հացրենի հողից, շաղ էր տվել նրա շիրմաքարին, ծաղիկներ դրել ու դատը-դատը արտասվել նաև մոր փոխարեն: Վերադարձին հետը թերեւ էր երրորդ գերեզմանի հողից ու պահ տվել պահարանում, որ

Երբ ուշքի եկավ Արտակը, տեսավ, որ իրենց շենքից մերթուսաներ թերեց մեր քաղաքի: Հազարավոր անմեղ մարդկանց հետ Գործակալյաններն էլ զոհ գնացին արհավիրքին: Հայրենական պատերազմի ժամանակ՝ 1945 թվականի մայիսի 1-ին զոհվեց ընտա-



Դեկտեմբերյան անեղ երկրաշարժը անդառնալի կորուստներ թերեց մեր քաղաքի: Հազարավոր անմեղ մարդկանց հետ Գործակալյաններն էլ զոհ գնացին արհավիրքին: Հայրենական պատերազմի ժամանակ՝ 1945 թվականի մայիսի 1-ին զոհվեց ընտա-





**Ծավատագիրը ԱՐՏՈՒՇ ՊԱՒՈՒՅԱՆԻՆ** մանկավարժի դրժվարին մասնագիտությունը էր պարզել, պարզել էր դաստիարակության գործին անհուկորեն նվիրվելու մեծ արվեստը: Ծնվել էր Արագածի ստորոտին տարածված Նորաշեն գյուղում, առաջին համաշխարհային տարում, սակայն կյանքի մեծ մասն ապրել էր Կուսաղյուսում, դարձել Տերյանի անվան և Ծառուսյանի անվան դպրոցների տնօրենը, իսկ կյանքի քառորդ դարը նվիրաբերել Ա. Պետրոսյանի անվան դպրոցին:

Քառորդ դար քաղել էր դրպրոցի միջանցքներով, ապրել աշակերտական գլխաթի ժխորով, նրա մեջ տևել էր երջանկությունը: Քաղաքի նշանավոր մանկավարժներից էր, մեկը նրանցից, ովքեր տարիներ շարունակ հյուսել են քաղաքի փառքը, բազմապատկել այն հարուստ ավանդույթները, որոնցով առանձնացել և ինքնուրույն դիմագիծ է ձևոր բերել կուսակրթական մանկավարժությունը:

Կուսակրթական բարձր պարզելների էր արժանացել Ա. Պավիկյանը: Նրա կործրքը գարդարում էին Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանները, բազմաթիվ մեդալներ: Նա համրապետության մատակարար ուսուցիչ էր: Անեղ փութումսի պահին իր բազմաթիվ սաների ու գործընկերների հետ նա վերջակետեց իր բնդուն կյանքը՝ փլատակների տակ թողնելով իր ապրած ու չապրած տարիները, իր նոր ծրագրերն ու նրազանգները...



**ՈՎ Կ Ի Ս Ա Մ  
Մ Ն Ա Գ Ի Ն  
Ր ՈՂՐ Ե ր ա զ ն Ե ր ր**

**ՀԱՍՄԻԿ ԳԱՌՆԻԿԻ ՄԱԶՄԱՆՅԱՆԸ** ծնվել է 1967 թ. նոյեմբերի 22-ին, 1974 թ. բնդունվել է Կրուպակայի անվան № 23 միջնակարգ դպրոցը: Գարդիին զուգրնթաց սովորել ու ավարտել է Երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը:

Նրա երազանքն էր մանկավարժ դառնալը և 1984 թ. բնդունվել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի ուսանողիական բաժինը: Անհազ էր նրա ուսման ծարավը: Որոշեց սովորել նաև ինստիտուտում գործող իրավաբանական, ապա նաև ժուռնալիստիկայի դասընթացներում, որոնք ավարտելուց հետո 5-րդ կուրսի շեմին մասնակցում էր նաև ինստիտուտի թատերական նրա տարիների շարունակ փայփայած երազները՝ կատարվեց ամենասոսկային, երկրաշարժը խլեց նրա ջանել, ծաղկուն կյանքը:



**ՄՆՈՒՆԴԻ ԾՆՈՐՀԱՎՈՐՆԵՐ,  
ԹԵ՛՛ ՄԱՀԴ ՈՂԱՄ**

Կիսախուսի ու փակ աչքերի մեջ ծովանում է արցունքի կաթիլը, լնամում է, ու այդ ծովի մեջ արտացոլվում է այնքան գեղեցիկ մի դեմք, խելացի մի գույգ աչքեր, հպարտ ու համարձակ հայացք:

**ԳԵՎՈՐԳ ՄԱՆՎԵԼԻ  
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

Այդ օրը դառնալու էր 13 տարեկան: ԱՅԴ օրը տանը սպասում էր դասընկերներին: ԱՅԴ օրը նշելու էին նրա ծրնրդյան տունը՝ Նշեցին...

Միրելի Գևորիկ, այս կյանքում դու հյուր եղար բնդամենը 13 տարի: Չհասցրիր ըզզզալ շատ բան: Քո ամենա հոգին, որ ձգտում էր բարձրին ու կատարյալին, այդպես էլ կարողով, առանց սավառնելու՝ բնկավ շարդված թեևրով: Գու հասցրիր քո կենսագրության մեջ գրել բնդամենը երեք թվական՝ 1975 թ. ծնվեցիր, 1982 թ. բնդունվեցիր դպրոց և... 1988 թ. դեկտեմբերի 7: Այդ օրը քո ծննդյան օրն է: Աշխարհի վրայով էլի շատ ու շատ կասնի այդ օրը, բայց դու երբևք էլ չես մեծանա, դու կմնա 13 տարեկան Գևորիկ: Ինչ-որ բարձր-ցածր լուրջան մեջ, կիսախուսի ու փակ աչքերի մեջ թափվում է անձրևը: Ու բնկնող ամեն կաթիլ ողորում է գերեզմանաքարը, ծաղկները, որ միշտ անպակաս են քո շիրիմից:



**ԿԱՐԵՆ ԵՎ ԼԻԱՆԱ  
ԵՆԳՈՅԱՆՆԵՐ**

Կյանքի գեղեցկությունը, գարնան թուշանքը բմրոշխնելու համար էին ծնվել լուսաշվի այս մանուկները, ծնվել էին ուրախություն ու երջանկություն սիրելու շքսպասում... Սակայն ամենակույ աղետը իր ճիրանների մեջ առավ նաև լուսանկարից նայող այս երեխաներին՝ 13-ամյա Կարենին և 9-ամյա Լիանային:

Աշխարհացունց երկրաշարժը կրթական մի շարք օջախների թվում, իր «գայրույթը» թափեց նաև № 10 միջնակարգ դպրոցի վրա, հողին հավասարեցրեց հսկա մասնաշենքը: Չոնված 300 աշակերտների մեջ էին քույր ու եղբայր Ենգույանները, ծնողների միակ հույան ու ապավենը: Ինչքան երազանքներ ու ծրագրեր էին ծրնողները մտովի իրականացած տեսնում, իրենց երեխաների ապագան ինչ լուսամասնչ գույներով էին պատկերացնում: Չէ՛ որ թե տղան, և թե աղջիկը ակնատու հաջողություններ ունենն ուսման մեջ, քարի էին, բնկերասեր:

Անչափ, անչափ դժվար է համակերպվել անդամակալի այդ կորստի հետ: Որդեկորույս մոր աչքը շարունակ դառն է, թվում է, ուր որ է կրացվի այն և կապտասկները ձեռքերին ներս կնտեն իր կյանքը իմաստավորողները ու լուրջան դատապարտված տունը նորից կյանք կստնի, աշխույժով կրցվի...




**ԱՂԱՎԵՆԻ ՀԵՆՐԻԿԻ ԼՈՒԼՄԱՅԱՆ (ծնված 1971 թ. հոկտեմբերի 14-ին)՝**

Նամա ջան, եկա՞ր: Ո՛ր ես գնում, նամա ջան... Այսպես էից դիմում քեզ տանը, քերոշ Աղավնի: Այդ անունը փորրոց էր մնացել և չնայած արդեն պրիտեխնիկական ինստիտուտի ուսանողուհի էիր, սակայն նույն փորրիկ նաման էիր մնացել ծնողների, Աղբորդ, հարազատների համար, նույն երեխան՝ մանկան միանությունսր ու պարզությամբ, պարզ ու շիտակ հայացքներով, ազնիվ ու անկեղծ բնավորությամբ: Եվ դրանից չէ՛ր արդուք, որ հավատում էիր ու աշխատում հավատացնել մարդկանց, որ կյանքում միշտ էլ կհաղթի բարին, որ բողբոջը անպայման կծաղկի, որ խավարին միշտ կհաջորդի լույսը... Հավատում էիր հրաշքների, ինչպես հեքիասներում է լինում: Երանի իրոք կյանքում այդպես լինելու: Երանի այդ ահավոր վայրկյաններին գեթ մեկ րոպեով, մեկ վայրկյանով կատարվեր այդ հրաշքը ու... թեևր առած՝ կարողանայիր թոնել ու փրկվի, ամենը Աղավնի: Աղավնի էիր քո ետությամբ, լույս մաքրությամբ: Փշրվեց հավատո միանգամից, ու հնուցսր անվերադարձ: Ու էլ երբևք քեզ չեն դիմի՛ նամա ջան, եկա՞ր...:



**ՆԱՐԵՆԵ ՀԱՎՈՒԻ  
ԿԻՐԱՎՈՅԱՆ  
(ծնված 1963 թ.)**

Անուսնացար սիրելով ու երջանիկ էիր Կիրակոսյանների բնուանիքում: Երջանիկ էիր քո երկու փոքրիկներով: Երբ հարսնացար, հոգով ու սրտով կապվեցիր Աղավնուն ու... դարձար հարազատ քույրեր: Որքան էիր սիրում իրար: Օրը բացվում էր մեր խոսք ու գրույցով, կուտակներով: Իսկ այդ ահավոր օրը հետո էիր նրանից, հետո՛ սիրելի ամուսնուց, փոքրիկ Տյուրայից: Քո հայրական տանը էիր, 10-ամյա Էմիլիայի հետ ու մարովի չէր անցնում, որ մտա է ահավորը, ապաստակին: Փորձեցիր փրկել փոքրիկիդ, բայց... միասին քայլեցիր այն սև ճամպարհով: Այսքան էլ դաժան ճակատագիր... Տեսնո՞ւմ ես Աղավնուն այնտեղ, գրույցո՞ւմ եք, հիշո՞ւմ մեզ...



Հույր վշտերի փուլն հավատարիմ:

Լուսանկար՝ Վ. Կառովի





### Հեռացար՝ ցավը

ս ր տ ո լ մ

(Մանկավարժ ընկերուհու՝

Լմնա Պետրոսյանի հիշատակին)



Սիրելի քույրիկ, ո՞վ կմտածեր, որ քո այդքան դժբախտ կյանքի վերջակետը կդնի երկրաշարժը: Ծակատագիրը չափից ավելի դաժան գտնվեց քո նկատմամբ: Տասնչորսամյա գեղեցիկ ու ծպտերես աղջիկ էիր, երբ պատերազմի ավարտից հետո վերադարձավ հայաստանի ու հիվանդ եղբայրդ՝ Արտյունը: Տարիներ հետո միայն մեր քաղաքը կը հասնա՞յի նրան, լեզենդար հն տախտիզին: Բազմ դա՛ տարիներ հետո: Մինչդեռ այն ժամը 1945-48 թվականներին նա հայաստանում ու տառապեց, և դու, թողնելով աղջկական հն տաքքրությունները, քո հոգու ողջ շնորհակցով և բարությունը միջրեցիր նրան, կիսեցիր նրա տառապանքը: Նրա մահվան հետ չհաշտվելով, թաքցնելով վիշտդ, աշխատեցիր մխթարել ծնողներին: Անուսնությունը կարծես քեզ կյանքի կոչեց, դարձյալ ծպտա երեսաց քո գեղեցիկ դեմքին: Հրճվում էիր հրեշտակի նման զույգ զավակներով: Սակայն երջանկությունը կար նաևու նդավ, հետևեց հաջորդ՝ ավելի ծանր հարվածը: Տասնհինգամյա գեղեցկուհի աղջիկը հիվանդացավ: Երբ տասնի յոթըստը խնամեցիր նրան, և մահից հետո մարմնից աչքերիդ կրակները, դարձար լուռ ու ինքնամոռի: Եվս երեք տարի, ու հողին հանձնեցիր ամուսնուդ, որը չդիմացավ դատեր կորստին: Սակայն դու, որքան էլ զարմանալի է, չարացար, չդաժանացար: Օժտված լինելով բարության, աշխատասիրության, համեստության, մարդկայնության տաղանդով, ավելի կապվեցիր աշակերտների հետ, քարձր պատասխանատվությանը էիր վերաբերվում քո աշխատանքին: Հո տան փրկատակների տակից դուրս եկավ մի թղթապանակ շնորհակալագրեր, պատվոգրեր, կրթաբանականներ՝ քո սակի քան

40-ամյա բարեխիղճ աշխատանքի գնահատականները: Մտորելի պսոթ անոթում են երկրաշարժի վերքերը, սակայն կենդանի հատում են կուճակից ու միտս բնակավայրերը: Կյանքը շարունակվում է: Սակայն այլ է մարդկային հոգին: Նրա վերքը կարող է ըստ պահանջի, բայց՝ խորանալու, լուռ ծիպու համար միայն, և բավական է փոքրիկ մի հուշ, մի հուշ, որ այն վերքը նորից չորոքովի: Թե՛ տանը, թե՛ դրսում, թե՛ քո՝ տնակներ դարձած սիրասուն դարոցի կողքով անցնելիս, թե՛ աշխատանքի ժամին հաճախ մտաքով տեղափոխվում են դեկտեմբերյան այն սև օրը, և իմ աչքի տառաջ հատնում է այն տեսարանը, թե ինչպես դու վեցերորդ դասարանից քո սիրասուն աշակերտների հետ գոհվեցիր: Դասարան, որտեղ դեռ հրաշքով փրկվեց միտք մի աղջիկ՝ Արծվիկը, որը երկար բուժվելուց հետո նոր միայն վերադարձել է դպրոց: Այդպես էլ դու չմտացար, որ քո տունը հազարավոր տներին նման, հողին հավասարվեց և քո որդին մնաց անտուն, մեկնաց մեկնուց: Եվ նա ընդս վերջին տան դռան բանալից քեզ հետ հողին հանձնեց... Սիրելի քույրիկ: Հո հիշատակին, քեզ նման երկրաշարժին զոհ գնացած հազարավոր մարդկանց հիշատակին քո սիրուն Արազած փողոցում կուռուցվելու է հուշանմանք: Դարեր կանցնեն, ու դուք կը մնաք սերունդների սրտերում. նրանց հիշողության կիզակն տուն:

Ն.ԱՋԻԿ ՍԱՐԴԱՆՅԱՆ, Նո 10 դպրոցի պատմության ուսուցչուհի



**ԱՐՏԻՔ ԱՎԱԿՅԱՆ** (ծնված 1974 թ. Լեհիսկանում): Երբ ծնվեց Աննան, ծնողների որսախառնությունը չափ ու շահման վերաբերում էր դրոշմաբեկ էին պահում ու փախվելու իրենց միտումնաբեր զավակին ծնողները, ի՞նչ հույսեր ու նպատակներ կապում նրա հետ: Տասնի սիրելի թոռն էր Աննան, որը հայրապետությանը էր կրում իր անունը, որովհետև... տասնի անունն էր, ու աշխատում էր ամեն ինչով նմանվել նրան՝ բարի էր, պարզ ու անմիջական, խիստ մաքրամեղ ու նույնը պահանջում էր դասընկերներից: Ու հաճախ տասնի շուրթերից լսելի էին գորովալից խոսքեր՝ «Գիտե՞ք, որ իմ Աննան...»: Այո, գիտե՞ք քո լորը, որ Աննան այդ տան միակ հույսն ու սպասվեն էր, այդ տան ջերմությունն ու լույսը, որ...ավա՛ղ, հանգստե՛լ միան գամից, հանկարծակի: Այսօր նրա կորուստն փշուր խորն են ապրում ոչ միայն ծնողները ու հարազատները, այլև՝ Բ. Դարիբջանյանի անվան դպրոցի ողջ կոլեկտիվը: Աննան անգամ դասարան մտնելիս ուսուցիչների աչքի տառաջ է գալիս Աննան իր քնքուշ, միամիտ ծպտով, աշխուժությամբ, խելացի ու մտածված պատասխաններով: Սիրում էր հունանիտաթ առարկաներ, սակայն բոլոր դասերին պատրաստվում էր բարեխիղճորեն: Ընկերները գիտեին, որ դեկտեմբերի 16-ին Աննան ծընունդանում էր ու... անհամբեր սպասում էին: Սպասում էր և Աննան...



**ՄԱՐԻՆԵ ԳԱՐՆԻԿԻ**  
**ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Ծնվել է 1864 թվականին, 1880-81 ուստարում ավարտել է Քումանդանի անվան № 13 դպրոցը: Մարիինն դուրբողական տարիներին աչքի է ընկել գերազանց առաջադիմությամբ և օրինակելի վարքով: Ավարտելով դպրոցը, նա ընդունվել է № 1 ուսումնարանը, ավարտել գերազանցությամբ, ստացել գծագրող կոնստրուկտորի մասնագիտություն: Հաջորդ տարին նա ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի Լեհիսկանի մասնաճյուղը, ավարտեց՝ ըստ ամսադրվ ինժեների որակավորում:

Սակայն լճացման շրջանի ճյուղավորումները տարածվել էին ամենուրեք, սոցիալական անարդարությունը նույնպես ամենուրեք զգացնել էր տալիս ու վրդովում մարդկային հոգու անդորրը: Երիտասարդ ինժեների համար համապատասխան աշխատանք չգտնվեց ոչ մի տեղ ու նա ստիպված պահելով իր դիպլոմը, որպես բանվորների աշխատանքի անցավ Չկապուլի անվան կարի գլխամասային ֆաբրիկայում:

Զոհվեց Մարիինն աշխատանքի վայրում: Գնաց դպրոցի սիրելի աշակերտուհին, ինստիտուտի խելոք ուսանողուհին, ձեռնարկության անուշադր բանվորուհին: Կրանքից վաղաժամ հեռացավ աղջկական մի վեստ մաքրություն, մի վճիտ սրբություն, իր հետ տանելով աշխարհին պարզած իր բոլոր անկատար սերերը:



**ԱՐԱՄ ՀՐԱԶԻ**  
**ՈՒՋԱՏՐԵԱՆ**

Թիկնել էր ու գեղաշ, հարցնելով պարզապես: 27 տարեկան էր: Ավարտել էր № 30 ինժե. դպրոցը, այնուհետև № 15 տեխնիկական ուսումնարանի խոհարարական բաժինը: Զոհվեց էլեկտրատեխնիկական գործարանում, որ աշխատում էր որպես խոհարար: Հարազատների միակ մխիթարությունն այն է, որ Արամի կյանքի ծառը չի կըտրվել, բարեբախտաբար կենդանի է մնացել երկրաշարժի ժամանակ մեկայնա զավակը՝ Հայրափին:

Արամը շատ էր տիրում դասերից հետո գնալ տեքստիլ, հորդորել պահակին, թե դռան բանալին մեր մտուն է մնացել: Հասնելով մորը ու, չնայած վերջինիս տուն գնալու հիշեցումներին, չէր հետանում նրանից... նայում էր, թե ինչպես են պըտրտվում իլիկները և հարցնում մորը՝ ախր, ո՞նց ես հասցնում այդպես արագ-արագ կտրված թելերը կպցնեմ: Երիտասարդի կյանքի կտրված թելը մայրը այնպես էլ ի գորու չնդավ կպցնել...

## Կ Ա Ն Խ Ա Գ Ո Ւ Ծ Ա Կ Ո Ւ Ս

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

չորրեկ էր 1986 թ. օգոստոսի 30-ին Ռուսիայում և Մոլդովայում սպառնող երկրաշարժը:

Ուրախացի գ ի տ ն ա կանը հայտնեց, որ հաջվի երկրաշարժից ինստիտուտի տնօրեն Քերիմովը 1988-ի մայիսին իրենից ստացել էր Արթրեջանի և Դադատանի կանխադրականությունները: Ըսկըզբում երկրաշարժը Դադատանում էր սպասվում: Սակայն տեղի ունեցավ երկրաշարժի վայրի տեղափոխություն դեպի արևմուտք:

— Զանգեղի Մուսկվա, Եմիսեյվույն, — սառց ուրախանում էր, — հայտնեցի, որ Անդրկովկասում մեծ աղետ է սպասվում, և դա ճշգրտում է պահանջում: Հետո եկա եզրակացության, որ ճշգրիտ վայրը Հայաստանի հյուսիսն է, ժամ կեսը՝ դեկտեմբերի 6-ից 10-ը: Նոյեմբերի 23-ին Ցաթաթում ԽՍՀՄ սերտոյինամիկակի 10-րդ խորհրդում զեկուցում կարդացի, որտեղ նրա պարակեցի իմ հետազոտությունների արդյունքները: Ինձ նախատեցին «Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ տագնապ կլինի Անդրկովկասում»: Ես պահանջում էի՝ շտապ գիտնականների ուժերն ի մի բերել ու ճշգրտել, ավելի կոնկրետ կանխատեսում անել: Պետք էր միացնել մյուս մեր դեմքը: Նման կանխատեսում էր արել և ստաղաֆիզիկոս Բենետը: Իսկ Պիսարինկոն արկածախնդիր է. նա շատ էր խանգարում այս ամենին: (Ժառանգակի)

«ԳՈՒՄԱՆՏԻ» ԹԻՐԹԻ ԽՄԱՍԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԿՈՆՍԱԾՐԻԻ ՀԱՂՀՐԱՏԻ ՏԳՐԱՆ, ԴԱՅՈՍՅԱՆ, Փ. 1: